
**ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆ – ՌՈՒՄԻՆԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 1991-2001 ԹԹ.**

ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայաստանի և Ռումինիայի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվելուց հետո պաշտոնական հանդիպումների ժամանակ կողմերի ներկայացուցիչները, բացի երկկողմ հարաբերությունների բաղադրատարր հանդիսացող ոլորտներից, առաջնային ուշադրություն են դարձրել միմյանց արտաքին քաղաքական գերակայություններին: Անկախությունից ի վեր Ռումինիայի արտաքին քաղաքականության առաջնային խնդիրը եվրաստլանտյան ռազմաքաղաքական և եվրոպական տնտեսական կառույցներին ինտեգրվելն էր: Եվրամիությանն անդամագրվելը Բուխարեստում դիտվում էր որպես երկրի բախտորոշ, ռազմավարական գերնպատակ: Ռումինիայում ակնկալվում էր, որ եվրաինտեգրումը երկրին հնարավորություն է ընձեռելու արագորեն մուտք գործելու արևմտաեվրոպական հանրություն, «թռիչք կատարելու» դեպի այդ համակարգին բնորոշ ժողովրդավարության և սոցիալ-տնտեսական զարգացման «բարձունքները»¹: Հետևաբար, Բուխարեստը պատրաստ էր այդ նպատակին հասնելու համար շատ մեծ գին վճարել: Բանն այն է, որ Արևմուտքի կողմից Հարավսլավիայի նկատմամբ կիրառված ռազմական գործողությունների, մասնավորապես Դանուբի կամուրջների ռմբակոծման և ԵՄ սահմանած բեռնարգելքի պատճառով միայն 1999 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Ռումինիայի կորուստները հասան 1 մլրդ ԱՄՆ դոլարի² և պատերազմից հետո էլ շարունակեցին աճել, ինչը բավականին մեծ գումար էր Ռումինիայի համար: Չնայած դեռևս 1999 թ. մարտի 19-ին Հարավ-արևելյան Եվրոպայի համագործակցության (SEEC) անդամ երկրներից հինգի (Ռումինիա, Բուլղարիա, Հունաստան, Թուրքիա, Նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետություն) ԱԳ նախարարները հայտարարեցին, որ եթե միջազգային հանրությունը հանգի ռազմական միջամտության տարբերակին, ապա իրենք կմիանան³: Ավելին, այս հարցում Բուխարեստը կանգնած էր Բալկաններին բնորոշ պարադոքսի առջև. կամ պահպանել ԵՄ բեռնարգելքը, որը ԵՄ երկրներին ոչ մի վնաս չէր հասցնում, մինչդեռ Ռումինիայի՝ առանց այն էլ թույլ տնտեսությունն ավելի էր սասանվում, և շարունակել կորցնել միլիոններ՝ վայելելով Արևմուտքի հարգանքը, կամ վերջ տալ բեռնարգելքին, կորցնել Արևմուտքի հարգանքն ու վաստակել միլիոններ, ինչպես նաև վերագտնել Մոսկվայի կորցրած հար-

¹ Տե՛ս ՀՀ ԱԳՆ, ՊՂԱ, գ. 202, թ. 63:

² Տե՛ս նույն տեղը, գ. 48, թթ. 97-98:

³ Տե՛ս նույն տեղը, թ. 5: Ռումինիայի և Բուլղարիայի արտգործնախարարները հայտարարեցին, որ իրենց երկրները կսահմանափակվեն մարդասիրական օգնությամբ:

գանքը վերագտնելը: Ինչևէ, ՆԱՏՕ-ին աջակցելու շնորհիվ 1999 թ. դեկտեմբերին Ռումինիան Բուլղարիայի, Սլովակիայի, Լատվիայի, Լիտվայի և Մալթայի հետ հրավեր է ստանում մասնակցելու ԵՄ անդամակցության բանակցություններն սկսելու հանդիպմանը⁴: Ի դեպ, Հարավսլավիայի անկումն ամրապնդեց Ռումինիայի դիրքերը որպես Բալկաններում ամենախոշոր պետության, որը կարող է մեծ դեր ունենալ նաև սևծովյան տարածաշրջանում:

Ձգտելով բավարարել ՆԱՏՕ-ին անդամագրվելու համար առաջադրվող հիմնարար պահանջներից մեկը՝ Բուխարեստը եռանդուն ջանքեր էր գործադրում հարևան երկրների հետ հարաբերությունները կարգավորելու ուղղությամբ, քանի որ, բացառությամբ Սլովակիայի, Բուխարեստի հարաբերությունները հարևանների հետ լարված էին տարածքային պահանջների պատճառով⁵: Բուխարեստը զարգացնում էր բավականին սերտ հարաբերություններ նաև Անկարայի հետ: Ուստի Ռումինիան թուրքական բիզնեսի համար դարձել էր կարևորագույն շուկա⁶: ՆԱՏՕ-ի Գործընկերություն հանուն խաղաղության ծրագրի շրջանակներում զարգանում էին հարաբերությունները նաև Նորվեգիայի հետ. համագործակցության առաջնային ուղղություն էր համարվում ռումինական խաղաղապահ ուժերի կազմավորումը⁷: Ռումինիան մեծ կարևորություն էր տալիս տարածաշրջանային տարբեր տիպի համագործակցություններին: Հատկապես նախագահ Է. Կոնստանտինեսկուի օրոք սկսեցին մեծ ուշադրություն դարձնել Ռումինիայի տարածքով անցնող և Կենտրոնական Ասիայի երկրներն ու Եվրոպան միմյանց կապող առևտրատնտեսական և տրանսպորտային միջանցք ստեղծելուն ու զարգացնելուն: Մասնավորապես, կասպյան նավթի փոխադրման հարցում Ռումինիան փորձում էր առանցքային տեղ գրավել⁸: Այստեղ մեծ կարևորություն էր ստանում Հարավային Կովկասն իր խնդիրներով ու հնարավորություններով:

Հարավային Կովկասում Ռումինիայի հիմնական շահը՝ կասպյան էներգակիրներն իր տարածքով տարանցման և TRACECA ու այլ տրանսպորտային ուղիներում առավելագույնս ընդգրկվելու ձգտումն առաջ էր մղում Ռումինիա-Ադրբեջան և Ռումինիա-Վրաստան հարաբերությունները: Իսկ Հայաստանը Բուխարեստի կողմից ընկալվում էր որպես ավանդական բարեկամական երկիր, որի հետ Ռումինիան ունի բազմաթիվ պատմական ու մշակութային կապեր: Ուստի այս հարաբերություններն ավելի շատ կրում էին իներցիոն բնույթ, թեպետ Ռումինիայի վարչապետ Ռադու Վասիլին գտնում էր, որ Հայաստանը կարող է լավ կամուրջ լինել իր երկրի համար դեպի Կովկաս և Կենտրոնական Ասիա⁹: Հետևաբար, տարածաշրջանում Բուխարեստն առաջնությունը տալիս էր Թբիլիսիի և Բաքվի հետ համագործակցությանը՝ ելնելով առարկայական աշխարհաքաղաքական գործոններից, որքան էլ որ Ռումինիան տարածաշրջանը դիտում էր որպես

⁴ Տե՛ս նույն տեղը, թ. 97:

⁵ Տե՛ս նույն տեղը, գ. 202, թթ. 112-113:

⁶ Տե՛ս նույն տեղը, գ. 48, թ. 5:

⁷ Տե՛ս նույն տեղը, գ. 199, թ. 19:

⁸ Տե՛ս նույն տեղը, գ. 216, թ. 88:

⁹ Տե՛ս նույն տեղը, գ. 48, թ. 32:

մեկ միասնական միավոր¹⁰: Այս նկատառումով էլ Ռումինիա-Հայաստան հարաբերությունները որոշակի կախվածության մեջ էին դրվում Ռումինիա-Ադրբեջան հարաբերություններից: Հայաստանի հետ հարաբերություններով տարածաշրջանի մյուս երկրներին «նեղացնել» չցանկանալու Ռումինիայի ձգտումն ուղղակիորեն դրսևորվում է նախագահ Իոն Իլիեսկուի դեռևս 1995 թ. դեկտեմբերի 1-ին Հայաստանի դեսպան Գեորգի Ղազինյանի հետ առանձնազրույցի ժամանակ. Հայաստան այցի հետ կապված ճշգրտումներ անելիս նախագահը նշում է, որ հասկանալի պատճառներով իր այցը պետք է զուգորդվի նաև Վրաստան և Ադրբեջան այցերով: Ըստ նրա՝ առանձին այցը Երևան անկասկած բացասաբար կընդունվեր Թբիլիսիում և Բաքվում՝ հարվածի տակ դնելով անդրկովկասյան պետությունների հետ Բուխարեստի որդեգրած համաչափ հարաբերություններ կառուցելու գործընթացը¹¹: Հետևաբար, հայ-ռումինական հարաբերությունները պայմանավորվում էին ոչ միայն և ոչ այնքան բուն հայ-ռումինական առաջնայնություններով, այլ նաև ուրիշ գործոններով, որոնք ավելի շուտ և ավելի շատ խանգարում էին, քան նպաստում ինչպես հայ-ռումինական հարաբերությունների կայացմանն ու զարգացմանը, այնպես էլ տարածաշրջանում վիճահարույց իրողությունների վերացմանը: Հետևաբար, 1998 թ. սեպտեմբերին Ռումինիա կատարած այցի ժամանակ ՀՀ ԱԺ նախագահ Խ. Հարությունյանն անդրադառնում է տարածաշրջանային համագործակցության խոչընդոտներին ու նշում, որ շատ դեպքերում այն կապում են տարածաշրջանում գոյություն ունեցող կոնֆլիկտների հետ, մինչդեռ, իր խորին համոզմամբ, տարածաշրջանային համագործակցությունը, լինելով երկուստեք փոխշահավետ, պետք է ծառայի այդ հակամարտությունների խաղաղ կարգավորմանը: Ուստի նա կարևորում է TRACECA ծրագրին տարածաշրջանի բոլոր երկրների հավասար մասնակցությունը և բոլոր երկրների շահերը հաշվի առնելը, այլապես նման ծրագրերը հեռանկարային չեն լինի¹²:

Հայ-ռումինական միջպետական հարաբերությունների իրավական հիմքն առաջին հերթին «Հայաստանի և Ռումինիայի միջև բարեկամության և համագործակցության մասին» պայմանագիրն է, որն ստորագրվել է 1994 թ. սեպտեմբերի 20-ին՝ 15 տարով, ըստ որի՝ կողմերը պայմանավորվում են իրենց միջև կապերն իրականացնել «ՄԱԿ-ի Կանոնադրությամբ, Հելսինկիի Եզրափակիչ ակտով և ԵԱՀԽ-ի այլ փաստաթղթերով վավերացված միջազգային իրավունքների սկզբունքներով»¹³: Հայաստանի համար Ռումինիայի դերը կարևորվում է որպես կամուրջ եվրախնտեզրման ճանապարհին¹⁴: Մանավանդ ոչ վաղ անցյալում երկու երկրներն էլ գտնվում էին ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական նույն միջավայրում, և 1990-ականների սկզբներին նրանց առջև ծառայան գրեթե նույնական խնդիրներ և մարտահրավերներ: Ուստի Ռումինիան կարող էր ոչ միայն քաղաքական կապ ապահովել դեպի եվրոպականացում և ֆիզիկապես

¹⁰ Տե՛ս նույն տեղը, գ. 52, թ. 10:

¹¹ Տե՛ս նույն տեղը, գ. 202, թ. 119:

¹² Տե՛ս նույն տեղը, գ. 216, թ. 187:

¹³ Նույն տեղում, գ. 102, թ. 201:

¹⁴ Տե՛ս նույն տեղը, գ. 22, թ. 39:

կամուրջի դեր կատարել¹⁵, այլ նաև փորձի փոխանակման համար կարևոր գործընկեր դառնալ: Այս հավանականությունն ամրագրվում է 1998 թ. հուլիսի 3-ին երկու նախագահների կողմից Երևանում հրապարակված «Հայաստանի և Ռումինիայի միջև գործընկերության և համագործակցության մասին» համատեղ հայտարարության մեջ¹⁶: Հայաստանի եվրոպականացման և եվրոպական կառույցներին ինտեգրվելու ջանքերին ռումինական աջակցության հնարավորությունն էլ ամրագրվում է Ռումինիայի նախագահ Էմիլ Կոնստանտինեսկուի հրավերով 2000 թ. ապրիլի 5-7-ը Ռումինիա պաշտոնական այց կատարած Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի և իր գործընկերոջ համատեղ հայտարարության մեջ, որտեղ Բուխարեստն իր «պատրաստակամությունն է հայտնում նպաստել Հայաստանի՝ Եվրոպայի խորհրդին անդամագրվելու գործընթացին, ինչպես նաև իր լիակատար աջակցությունը ցուցաբերել Առևտրի համաշխարհային կազմակերպությանը Հայաստանի արագ անդամակցությանը»¹⁷: Ռումինիան նաև ցանկություն է արտահայտում Հայաստանի հետ սերտորեն համագործակցել TRACECA և INOGATE միջպետական ծրագրերի շրջանակներում¹⁸:

Հայ-ռումինական պաշտոնական հանդիպումների օրակարգերի հիմնական հարցերը կարող ենք տեսակավորել ըստ հետևյալ խմբերի.

1. Ղարաբաղյան հիմնահարց և համադրելի իրավիճակներ,
2. Հարևան երկրների հետ հարաբերություններ,
3. Ռազմաքաղաքական կառույցների հետ հարաբերություններ:

Ղարաբաղյան հիմնահարց: 1994 թ. հուլիսի 28-ին Ռումինիայում Հայաստանի դեսպան Գեորգի Ղազինյանը հանդիպում է Ռումինիայի արտաքին գործերի պետքարտուղար, ԱԳՆ առաջին տեղակալ Իոն Գորիցայի հետ և ՀՀ արտգործնախարարի հանձնարարությամբ ռումինական կողմին տեղեկացնում Ղարաբաղյան հակամարտության գոտում հրադադարի վերաբերյալ կնքված եռակողմ համաձայնագրի մասին: Ռումինիայի ԱԳՆ անունից Ի. Գորիցան խորին գոհունակություն է հայտնում հրադադարի համաձայնագրի ստորագրման առիթով՝ որակելով այն կարևոր հաղթանակ հակամարտության խաղաղ կարգավորման ճանապարհին: Ավելին, պետքարտուղարը հայտնում է ռումինական կողմի պատրաստակամությունը՝ իր ուժերի ներածին չափով աջակցելու Ղարաբաղյան հրադադարի մասին համաձայնագրի իրականացմանը: Այդ կապակցությամբ նա տեղեկացնում է, որ ԵԱՀԽ-ն ռումինական հինգ ռազմական փորձագետ է հայցել՝ անհրաժեշտության դեպքում միջազգային դիտորդի կարգավիճակով Ղարաբաղ գործուղելու համար, և որ Բուխարեստը մտադրվել է ընդառաջել այդ խնդրանքին: Բացի այդ, Ի. Գորիցան մեծապես կարևորում է Ղարաբաղյան խնդրի շուրջ Արևմուտք-Ռուսաստան իրական փոխըմբռնման ձեռքբերու-

¹⁵ Հայկական կողմը բավականին մեծ հետաքրքրություն է ցուցաբերել Կոնստանցա նավահանգստի և Փոթի-Կոնստանցա լաստանավային երթուղով Եվրոպայի հետ կապվելու հնարավորության հարցի շուրջ:

¹⁶ Տե՛ս նույն տեղը, գ. 202, թթ. 7-8:

¹⁷ Նույն տեղում, թ. 77:

¹⁸ Տե՛ս նույն տեղը, թ. 109:

մը՝ այն համարելով կարգավորման առաջնահերթ նախադրյալ¹⁹: Ավելին, դեռևս միջպետական հարաբերությունների հաստատման սկզբնական շրջանում էր ռումինական կողմը պատրաստակամություն հայտնել բանակցելու ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափերով՝ կողմերին փակուղուց դուրս բերելու նպատակով²⁰: Սակայն 1995 թ. Ռումինիայի նախագահ Իոն Իլիեսկուն հայտարարում է, որ «Ռումինիան խաղաղապահ զորքեր չի ուղարկելու Լեռնային Ղարաբաղի տարածաշրջան, քանի որ Ռումինիայի սկզբունքային, քաղաքական դիրքորոշումն է, ՄԱԿ-ի շրջանակներում, ռումինական խաղաղապահ զորքեր չուղարկել հարևան երկրներ, այդ թվում նախկին Խորհրդային Միության տարածք»²¹:

Համեմայնդեալս, Բուխարեստը փորձում է մշտապես շեշտադրել հակամարտող կողմերից հավասար հեռավորության վրա մնալու իր քաղաքականությունը՝ զորակցելով խաղաղ կարգավորման մասին ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի որոշումներին²²: Սա վիճելի հարցերում չեզոք դիրքորոշում ցուցաբերելու և ՆԱՏՕ-ի դիրքորոշման շրջանակներից դուրս չգալու միտում էր: Ուստի կարելի է եզրակացնել, որ Բուխարեստի դիրքորոշումը դարաբաղյան խնդրի շուրջ ածանցվում էր ՆԱՏՕ-ին և ընդհանուր «արևմտյան ընկերակցությանն» անդամագրվելու ռումինական քաղաքականությունից:

Շարունակելով անդրկովկասյան տարածաշրջանի երկրներին հնարավորինս չօտարելու իր քաղաքականությունը, ավելին՝ շահագրգռված լինելով տարածաշրջանի էներգակիրների տարանցման հնարավորություններով՝ Բուխարեստը, ի դեմս Հայաստանում Ռումինիայի դեսպան Պ. Պլատոնայի, 1999 թ. մարտի 25-ին հայտարարում է, որ ԵԱՀԿ-ում Ռումինիայի ներկայացուցիչը պատրաստ է աջակցելու հայկական պատվիրակությանը Վիեննայում, ինչի համար էլ խնդրում է լրացուցիչ տեղեկություններ տրամադրել դարաբաղյան խնդրի վերաբերյալ՝ Վիեննա հաղորդելու նպատակով²³:

Հատկանշական է, որ Բուխարեստի հետաքրքրությունը դարաբաղյան հարցում ունի գործնական նշանակություն, քանի որ Ռումինիան իր հերթին կանգնած է քաղաքական մարտահրավերի առջև ռումինաբնակ հունգարների և մոլդովական խնդիրների, ինչպես նաև հարավսլավական հիմնախնդրի պատճառով: Ռումինիայի պետական շահերի համար այս խնդիրներից ամենասուրը ռումինաբնակ հունգարների խնդիրն է, քանի որ նրանց պահանջներում պաշտոնական Բուխարեստը տեսնում է մարտահրավեր իր տարածքային ամբողջականությանը: Այս հարցը նաև դուրս է գալիս պետական սահմաններից ու վերաճում է ռումինա-հունգարական միջպետական խնդրի: Խնդրի հիմքում ընկած են Տրանսիլվանիայի պետական պատկանելության և երկու երկրներում համապատասխանաբար հունգար և ռումին փոքրամասնությունների իրավունքների ապահովման խնդիրները: Իսկ ռումինա-մոլդովական տարածայնությունների հիմքում

¹⁹ Տե՛ս նույն տեղը, գ. 199, թթ. 120-121:

²⁰ Տե՛ս նույն տեղը, գ. 198, թ. 68:

²¹ Նույն տեղում, գ. 202, թ. 1:

²² Տե՛ս նույն տեղը, թ. 70:

²³ Տե՛ս նույն տեղը, գ. 48, թ. 8:

հիմնականում ընկած է ռումինական այն տեսակետը, որ Սոլդովան հեռու անցյալում նույն երկիրն էր Ռումինիայի հետ, և նրա հետ վերամիավորվելու հույսը դեռ չի կորել²⁴: Իսկ ինչ վերաբերում է Կոսովոյի անկախացման գործընթացին, ապա Բուխարեստը կարևորում էր ռազմական գործողությունների դադարեցումը և Հարավսլավիայի տարածքային ամբողջականության շրջանակներում Կոսովոյին ինքնավարություն տալը²⁵: Ի դեպ, նույն մոտեցումն է ցուցաբերում Բուխարեստը նաև Ղրիմի հարցում, որը, սակայն, Ուկրաինայի ներքին հարցն է, քանի որ Ղրիմը սահմանադրականորեն Ուկրաինայի անքակտելի մասն է²⁶: Մինչդեռ նույն Ուկրաինայի հետ հարաբերություններում որոշակի լարվածություն առաջացնող հանգամանք է Բուխարեստի դիրքորոշումը Յուսիսային Բուկովինայի և Հարավային Բեսարաբիայի նկատմամբ, որոնք համարվում են ռումինական պատմական տարածքներ²⁷: Ռումինական կողմի այս դիրքորոշումն արտահայտվում է «Սոլուտով-Ռիբենտրոպ պակտը» առ ոչինչ ճանաչելու և դրա բացասական հետևանքները վերացնելու²⁸ վերաբերյալ պարբերաբար բարձրաձայնվող պահանջի տեսքով: Ուստի հարցը ոչ թե իրավական հարթությունում է, այլ քաղաքական շահերի ու նպատակահարմարության:

Հետաքրքիր է, որ ռումինա-հունգարական հարաբերություններում առկա սրությունը բավականին արագ կարող էր ազդել ռումինա-հայկական հարաբերությունների վրա: Մասնավորապես, նախագահ Ի. Իլիեսկուի և նրա թիմակիցների մոտ խիստ դժգոհության տեղիք է տվել ռումինահայ համայնքի վարչության նախագահ, խորհրդարանի պատգամավոր Վարուժան Ոսկանյանի բացահայտ ընդդիմությունը երկրի նախագահին և առհասարակ իշխանություններին: Հատկապես դժկամության տեղիք է տվել Վ. Ոսկանյանի գաղափարական և գործնական սերտ համագործակցությունն այսպես կոչված Ռումինիայի հունգար համայնքի անջատողական ուժերի հետ, որոնց գործունեությունը, Բուխարեստի գնահատմամբ, վտանգում է Ռումինիայի տարածքային ամբողջականությունն ու ազգամիջյան համերաշխությունը: Ուստի ռումինական կողմը հայկական կողմին մի քանի անգամ հասկացնում է իր ցանկությունը՝ Վ. Ոսկանյանի փոխարեն համայնքի ղեկավար տեսնել ռումին պետականությանն ավելի հավատարիմ գործչի²⁹:

Այսպիսով, արժարժվող տարածքային-իրավաքաղաքական հարցերի վերաբերյալ Բուխարեստի մոտեցումը հիմնականում տարածքային ամբողջականության պահպանման օգտին էր: Ավելին, «Հայաստանի և Ռումինիայի միջև բարեկամության և համագործակցության մասին» պայմանագրի 4-րդ հոդվածով ամրագրվում է. «... կողմերը չեն ճանաչելու տարածքային որևէ փոփոխություն կամ գերակայություն, որը հետևանք է սահմանների անձեռնմխելիությանը և տարածքային ամբողջականության»

²⁴ Տե՛ս նույն տեղը, գ. 52, թթ. 107-108:

²⁵ Տե՛ս նույն տեղը, գ. 48, թ. 4:

²⁶ Տե՛ս նույն տեղը, գ. 199, թ. 19:

²⁷ Տե՛ս նույն տեղը, թ. 48:

²⁸ Տե՛ս նույն տեղը, գ. 199, թթ. 42-43:

²⁹ Տե՛ս նույն տեղը, գ. 202, թ. 69:

ընդ վնաս հասցրած կամ հասցնող ուժի կիրառման սպառնալիքի»³⁰: Յետաքրքիր է, որ խոսքը պայմանավորվող կողմերի տարածքների կամ սահմանների բռնի փոփոխությունը ճանաչել/չճանաչելու մասին չէ, այլ ընդհանուր դրույթ է ամրագրվում «տարածքային որևէ փոփոխություն» չճանաչելու մասին՝ առանց տարածքային հստակ հիշատակումների: Բացի այդ, «սահմանների անձեռնմխելիությանը և տարածքային ամբողջականությանը վնաս հասցրած կամ հասցնող ուժի կիրառման սպառնալիքի» ձևակերպմամբ կողմերը պայմանավորվում են ոչ միայն տվյալ համաձայնությունից հետո ի հայտ եկող հավանական իրավիճակների, այլ նաև մինչ այդ տեղ գտած գործընթացների վերաբերյալ: Չատկապես շեշտվում է ոչ թե «տարածքային ամբողջականության սկզբունքին», այլ պարզապես «տարածքային ամբողջականությանը» վնասող գործոնը: Ի դեպ, այս ձևակերպումն առանց «ժողովուրդների հավասարության և ինքնորոշման իրավունքի» մասին հիշատակման ստանում է անհավասարակշիռ բնույթ: Այս հանգամանքը երկու երկրների արտաքին քաղաքական գերակայություններում և համանման երևույթների հանդեպ նախապես առկա մոտեցումների տարբերության ծնունդ է:

Իսկ ահա Ռումինիայի նախագահ Էմիլ Կոնստանտինեսկուի 1998 թ. հուլիսի տարածաշրջանային այցի ընթացքում Բաքվում, Թբիլիսիում և Երևանում նախագահների կողմից ստորագրված համատեղ հայտարարություններում տեղ են գտնում տարբեր ձևակերպումներ. Բաքվում և Թբիլիսիում հրապարակված հայտարարություններում ԼՂ և Աբխազիայի հիմնախնդիրների համատեքստում ընդգրկվում է տարածքային ամբողջականության սկզբունքը: Մինչդեռ նախքան այցելությունը հայկական և ռումինական կողմերի միջև պայմանավորվածություն էր ձեռք բերվել թե՛ Բաքվում, թե՛ Երևանում ընդունվելիք հայտարարություններում հղում չկատարել ԼՂ հիմնահարցին: Ընդ որում, ռումինական կողմն անվերջ պնդել է Երևանի և Բաքվի հետ հարաբերություններում հավասարակշռություն պահպանելու իր ցանկությունը: Ի դեպ, երբ հայկական կողմը առաջարկում է հայ-ռումինական հայտարարության մեջ մի կետ մտցնել, որով ռումինական կողմը ԼՂ հիմնախնդրում հայկական դիրքորոշման նկատմամբ իր ըմբռնումը կարտահայտեր, ռումինական կողմը հրաժարվում է: Երևանի հետ հարաբերությունները Բաքվի հետ հարաբերություններից բխեցնելու մեկ այլ օրինակ էլ Չայաստան-Վրաստան-Ռումինիա եռակողմ համագործակցություն հաստատելու վերաբերյալ Բուխարեստի դժկամությունն էր, ինչը բացատրվում է Ադրբեյջանին «չնեղացնելու» նկատառումով³¹: Յետաքրքիր է, որ արդեն Ռումինիայի նախագահ Իոն Իլիեսկուի³² 2001 թ. հոկտեմբերի 8-9-ը տևած հայաստանյան այցի ընթացքում հրապարակված համատեղ հայտարարության մեջ արձանագրվում է առավել չեզոք և հավասարակշռված ձևակերպում. «...Կողմերը կարևոր նշանակություն են տալիս երկկողմ և բազմակողմ համագործակցությանը ԵԱՀԿ և Եվրոպայի

³⁰ Նույն տեղում, գ. 102, թ. 203:

³¹ Տե՛ս նույն տեղը, գ. 52, թ. 11:

³² Իոն Իլիեսկուն նախագահել է 1990-96 և 2000-04 թթ.:

խորհրդի շրջանակներում և ընդգծում ՅԵԼԻՍԵՅԻ Եզրափակիչ ակտի բու-
լոր սկզբունքների հավասար և անվերապահ կիրառման հրամայակա-
նը»³³: Հավանական է, որ այս հանգամանքը պայմանավորված էր
կասայան նավթը Ռումինիայի տարածքով Արևմուտք տեղափոխելու գոր-
ծում Բուխարեստի սպասելիքների նվազմամբ, ինչի պատճառը կասայան
ավազանի նավթի պաշարների սպասվածից ավելի քիչ քանակության ի
հայտ գալն էր³⁴:

Հետևաբար, ենթադրել, որ այսպիսի պարադոքսալ իրավիճակում և
ղարաբաղյան հարցի հետ այս կամ այն առումով համադրելի բարդ խըն-
դիրների առջև կանգնած Բուխարեստը ԼՂ-ի խնդրի վերաբերյալ կարող էր
ունենալ շոշափելի հայանպաստ դիրքորոշում, առնվազն իրատեսական
չէ: Ուստի այս երկրի հետ պետք է ավելի զգույշ, բայց անդադար հետևո-
ղական աշխատանք տանել՝ ադրբեջանական էներգակիրների խայծին
հակակշիռ ստեղծելու համար:

Հարևան երկրների հետ հարաբերություններ: Հայ-ռումինական
պաշտոնական հանդիպումների շրջանակներում հետաքրքրություն են ցու-
ցնում կայացնող հարցերից է նաև հարևան երկրների հետ հարաբերությունների
խնդիրը: Մասնավորապես, Հայաստանի համար խնդրահարույց էր Թուր-
քիայի դիրքորոշումը ոչ միայն հայ-թուրքական հարաբերությունների տե-
սանկյունից, այլ նաև զարաբաղյան հակամարտության համատեքստում:
Ուստի պատահական չէ, որ Երևանն անկողմնակալություն էր ակնկալում
Թուրքիայից և գտնում, որ եթե չլիներ Թուրքիայի ոչ կառուցողական, խտ-
րական քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ և կողմնակալու-
թյունը ԼՂ հակամարտության հարցում, ապա Հայաստանի և Ադրբեջանի
համար համաձայնության գալու հնարավորությունը շատ ավելի մոտ կլի-
ներ³⁵: Ավելին, պաշտոնական Երևանի կարծիքով հայ-թուրքական հարա-
բերությունների կարգավորումն առանցքային նշանակություն ունի տարա-
ծաշրջանում անվտանգություն և կայունություն հաստատելու համար: Ուս-
տի, քանի դեռ Հայաստանը Թուրքիայի հետ չունի դիվանագիտական հա-
րաբերություններ, իսկ վերջինս միջազգային հարաբերությունների աս-
պարեզում շատ դեպքերում բացահայտ թշնամական քաղաքականություն
է վարում Հայաստանի նկատմամբ, Ռուսաստանի ռազմական ներկայու-
թյունը տարածաշրջանում հավասարակշռող ու կայունացնող գործոն է և
հուսալի երաշխիք երկրի անվտանգության ապահովման համար: Դրանով
է բացատրվում Հայաստանի անդամակցությունը ՀԱՊԿ-ին: Մինչույն ժա-
մանակ, Ռուսաստանի հետ Հայաստանի ռազմաքաղաքական հարաբե-
րությունները սպառնալիք չեն հարևան պետությունների համար և խոչըն-
դոտ չեն ՆԱՏՕ-ի և նրա առանձին պետությունների հետ գործընկերություն
հաստատելու ճանապարհին³⁶: Մինչդեռ բավականին խնդրահարույց էին
ռումինա-ռուսական հարաբերությունները, որոնցում առկա լարվածությու-
նը որոշակիորեն տարածվում էր նաև հայ-ռումինական հարաբերություն-

³³ Նույն տեղում, գ. 52, թ. 222:

³⁴ Տե՛ս նույն տեղը, գ. 48, թթ. 64-65:

³⁵ Տե՛ս նույն տեղը, գ. 52, թ. 148:

³⁶ Տե՛ս նույն տեղը, թթ. 90-91:

ների վրա: Բանն այն է, որ ռումինա-ռուսական հարաբերությունների վրա ազդեցություն ունեն այն հանգամանքը, որ պաշտոնական Բուխարեստը ՆԱՏՕ-ի ընդլայնման և ՆԱՏՕ-ին ու ԵՄ-ին անդամակցելու եռանդուն ջատագովն էր: Պատահական չէ, որ 1995 թ. սեպտեմբերին Իլիեսկուի ամերիկյան այցի ժամանակ պաշտոնական Վաշինգտոնի ներկայացուցիչները նշում էին, որ Ռումինիայի «ՆԱՏՕ-ականացումը» պետք է հաշվի առնի Ռուսաստանի մտահոգությունները³⁷: Ավելին, ՆԱՏՕ-ին և եվրակառույցներին անդամագրվելը Բուխարեստը դիտարկում էր տարածաշրջանում Ռուսաստանի հնարավոր ծավալապաշտական նկրտումներից պաշտպանվելու միջոց³⁸: Ռումինա-ռուսական հարաբերությունների վրա որոշակի բացասական ազդեցություն էր թողնում նաև, այսպես կոչված, մոլդովական խնդիրը, այն է՝ Քիշինևի հնարավոր ռումինացումը, Մոլդովայում գտնվող ռուսական 14-րդ բանակի առկայությունը, Մերձդնեստրի կարգավիճակի խնդիրը և այլն: Այդ առումով Բուխարեստում գոհունակությամբ էր ընկալվում Ուկրաինայի նախագահ Լ. Կուչմայի քաղաքական վարքագծի հակա-ռուսական միտումը, դրական մոտեցումը ՆԱՏՕ-ին անդամագրման Ռումինիայի գաղափարին³⁹:

Հատկանշական է, որ ռումինական կողմը ոչ միայն հետաքրքրություն էր դրսևորում հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ, այլև դեռևս 1992 թ. ցանկություն էր հայտնում դառնալու միջնորդ հայ-թուրքական հարաբերություններում տնտեսական հարցերի առնչությամբ⁴⁰: Ավելին, հաշվի առնելով ռումինա-թուրքական բավականին սերտ հարաբերությունները՝ ռումինական կողմը պատրաստակամություն էր հայտնում նպաստելու հայ-թուրքական համագործակցության զարգացմանը երկկողմ և եռակողմ շրջանակներում, ինչպես նաև հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորմանը⁴¹: Փոխարենը ռումինական կողմը որոշակի հետաքրքրություն էր ցուցաբերում ռումինա-ռուսական հարաբերությունների կարգավորման համար հայ-ռումինական հարաբերություններն օգտագործելու ուղղությամբ⁴²:

Միջազգային կառույցների հետ հարաբերություններ: ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանը և Ռումինիան, որ ոչ վաղ անցյալում գտնվում էին միևնույն աշխարհաքաղաքական և ռազմաքաղաքական հարթության վրա, ստիպված էին կողմնորոշվել ըստ նոր աշխարհաքաղաքական իրողության և վերաձևավորվող համաշխարհային status quo-ի: Նույնը վերաբերում է նաև գոյություն ունեցող և այդ ընթացքում ձևավորվող միջազգային ռազմաքաղաքական, քաղաքական, տնտեսական միավորումների հետ հարաբերվելու և առնչության եզրեր ստեղծել - չստեղծելու հարցին: Եվ քանի որ 1990-ական թթ. սկզբներից սկսած ռազմաքաղաքական կառույցներին ինտեգրվելը դառնում է հակասական շահերի ջրբաժան, կողմերի քայլերն այդ ուղղություններով և այդ քայլերի վերաբերյալ միմյանց

³⁷ Տե՛ս նույն տեղը, գ. 202, թ. 113:

³⁸ Տե՛ս նույն տեղը, թ. 43:

³⁹ Տե՛ս նույն տեղը, թթ. 42-44:

⁴⁰ Տե՛ս նույն տեղը, գ. 198, թ. 68:

⁴¹ Տե՛ս նույն տեղը, թ. 9:

⁴² Տե՛ս նույն տեղը, գ. 88, թ. 112:

և այլ՝ երրորդ կողմի կարծիքները բավականին մեծ հետաքրքրություն էին առաջացնում ինչպես պաշտոնական Երևանում, այնպես էլ Բուխարեստում: Յետևաբար, հանդիպումների ժամանակ կողմերի ներկայացուցիչներն անդրադարձ են կատարում նաև միջազգային կառույցների, դրանց ինտեգրվելու և համագործակցելու վերաբերյալ միմյանց կարծիքներին: Ընդհանրապես, դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո հայկական կողմը կարևորում էր ռումինական կողմի հետ համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և կառույցների շրջանակներում: Այս համագործակցությունն առաջին հերթին կարևորվում էր ՄԱԿ-ի և մյուս պետական ու ոչ պետական կազմակերպությունների շրջանակներում Յայաստանի համար անձանոթ միջավայրերում կողմնորոշվելուն օգնելու տեսանկյունից⁴³:

Միջազգային հարթակներում համագործակցության վերաբերյալ հայ-ռումինական առաջին համաձայնություններից մեկն արձանագրվում է երկու երկրների ԱԳՆ-ների միջև 1991 թ. դեկտեմբերի 17-ին կնքված խորհրդրդատվությունների մասին արձանագրության մեջ, որի հոդված 2-ում կողմերը պայմանավորվում են խորհրդատվություններ իրականացնել՝ մի շարք խնդիրներ, այդ թվում նաև ՄԱԿ-ին Յայաստանի անդամակցությանն աջակցելու վերաբերյալ հարցը քննարկելու համար⁴⁴: Համագործակցության վերաբերյալ կողմերի դիրքորոշումները կրկին արձանագրվում են երկու երկրների նախագահների 1998 թ. հուլիսի, 2000 թ. ապրիլի, 2001 թ. հոկտեմբերի համատեղ հայտարարություններում: Ռումինական կողմն իր պատրաստակամությունն է հայտնում «նպաստել ՀՀ-ի ԵՄ-ին անդամագրվելու գործընթացին, ինչպես նաև լիակատար աջակցություն ցուցաբերել ԱՀԿ-ին Յայաստանի անդամակցությանը»: Կողմերն ընդգծում են երկկողմ և բազմակողմ համագործակցության կարևորությունը Եվրաստլանտյան գործընկերության խորհրդի և ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում⁴⁵: Բացի այդ, ռումինական կողմը պարբերաբար հաստատում էր իր խոստումը՝ աջակցել Յայաստանի անդամակցությանը Տրանսպորտի նախարարների եվրոպական կոնֆերանսին⁴⁶: 2000 թ. ապրիլի համատեղ հայտարարության մեջ նաև նշվում է, որ «կողմերն իրենց հավատարմությունն են արտահայտում առ այն իրավունքը, որ յուրաքանչյուր պետություն կարող է ազատորեն մասնակցել անվտանգության այն միջոցառումներին և կառույցներին, որոնք համարում է առավել համապատասխան իր անվտանգության շահերին»⁴⁷: Ի դեպ, այս հարցի վերաբերյալ փորձի փոխանակումը շատ կարևոր ու գնահատելի հանգամանք էր և՛ Երևանի, և՛ Բուխարեստի համար, քանի որ մի կողմի փորձը մյուսի համար ուղեցույցի դեր կարող էր խաղալ և օգնել ավելի ճիշտ և արդյունավետ կողմնորոշվելու:

Ռազմաքաղաքական կառույցների, մասնավորապես ՆԱՏՕ-ի հետ հարաբերություններում և՛ Երևանի, և՛ Բուխարեստի համար բավականին

⁴³ Տե՛ս նույն տեղը, գ. 198, թ. 68:

⁴⁴ Տե՛ս նույն տեղը, գ. 102, թ. 13:

⁴⁵ Տե՛ս նույն տեղը, գ. 52, թթ. 79, 122-123:

⁴⁶ Տե՛ս նույն տեղը, գ. 48, թ. 34:

⁴⁷ Նույն տեղում, գ. 52, թ. 79:

ագղեցիկ ու նշանակալի էր Մոսկվայի դիրքորոշումը, ինչն ուներ աշխարհաքաղաքական կիրառական նշանակություն: Բանն այն է, որ ՆԱՏՕ-ի հետ հարաբերություններն ու այդ կառույցին հավանական անդամակցությունը Ռուսիայում համարվում էր Ռուսաստանի հնարավոր ծավալապաշտական նկրտումների դեմ կանխարգելիչ գործոն⁴⁸: Ուստի այս հարցում իր պատրաստակամությունն ապացուցելու համար Ռուսիայի Արևելյան Եվրոպայի երկրներից առաջինն ստորագրեց «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագիրն ու առաջինը ներկայացրեց անհատական ծրագիր⁴⁹: Պետք է նշել, որ համագործակցության այս փուլը Ռուսիայի մեծապես կարևորում էր, քանի որ այն ընկալվում էր որպես ՆԱՏՕ-ի ընդունարան⁵⁰: Մինչդեռ Ռուսիայի անդամակցության վերաբերյալ ՆԱՏՕ-ի մոտեցումը միանշանակ չէր՝ այդ երկրի և դրա իշխանությունների վերաբերյալ Արևմուտքում առկա դիրքորոշման և ռուսական գործոնի պատճառով: Եթե առաջին հարցի վերաբերյալ Արևմուտքում կար կանխակալ բացասական կարծիք, թե Ռուսիայի անհույս հետամնաց երկիր էր՝ կոմունիստամետ իշխանությամբ⁵¹, ապա երկրորդ հարցն առավել լուրջ էր ու հենվում էր աշխարհաքաղաքական շահերի վրա: ՆԱՏՕ-ի ընդհուպ մոտեցումը նախկին Խորհրդային Միության սահմաններին լուրջ ներքաղաքական խնդիրներ կարող էր առաջացնել Ռուսաստանում, որտեղ 1995 թ. վերջում խորհրդարանական, իսկ 1996 թ. կեսերին նախագահական ընտրություններ էին կայանալու: Այդ խնդիրը կարող էր բացասաբար անդրադառնալ ԱՄՆ նախագահ Բ. Բիլինթոնի համար նախընտրելի Բ. Ելցինի քաղաքական ներուժի և Ռուսաստանի նախագահի պաշտոնում նրա վերընտրվելու հավանականության վրա: Արդյունքում Ռուսաստանի արտաքին քաղաքական վարքն ու մասնավորապես Արևմուտքի հանդեպ դիրքորոշումը կարող էին բավականին լուրջ փոփոխություններ կրել: Ուստի Կրեմլի Սուրբ Կատերինա դահլիճում 1995 թ. մայիսի 10-ի առավոտյան կայացած հանդիպման ժամանակ Բ. Ելցինն ու Բ. Բիլինթոնը համաձայնվում են հետաձգել ՆԱՏՕ-ի ընդլայնումը մինչև ռուսական ընտրությունների ավարտը⁵²: Հետևաբար, մեծ մասամբ վերոնշյալ հանգամանքի բերումով էլ Արևմուտքը Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի պետությունները բաժանում էր «առաջնահերթ» և «երկրորդ կարգի» թեկնածուների, ինչը Բուխարեստում սխալ էին համարում և գտնում, որ նման մոտեցումը կհանգեցնի տարածաշրջանի երկրների միջև հակասությունների սրման՝ ընդհուպ մինչև հակամարտությունների հրահրման⁵³: Իսկ Ռուսիայի իր ձգտման հանդեպ Ռուսաստանի դրական դիրքորոշմանն արժանանալու հույս չունենալով, քանի դեռ երկու երկրների միջև «պատմական ժառանգության» պատճառով բացակայում էր միջպետական պայմանագիրը:

Այս համատեքստում և հաշվի առնելով հայ-ռուսական միջպետական

⁴⁸ Տե՛ս նույն տեղը, գ. 202, թ. 63:

⁴⁹ Տե՛ս նույն տեղը, թ. 64:

⁵⁰ Տե՛ս նույն տեղը, գ. 48, թ. 62:

⁵¹ Տե՛ս նույն տեղը, գ. 202, թ. 64:

⁵² Տե՛ս Ասմուս Ռոնալդ, Բացելով ՆԱՏՕ-ի դուռը. ինչպես վերակառուցվեց Ռաշին-քը նոր դարաշրջանի նախաշեմին, Եր., 2008, էջ 149-151:

⁵³ Տե՛ս ՀՀ ԱԳՆ, ՊՊԱ, գ. 202, թ. 64:

հարաբերությունների բնույթը՝ հայ-ռումինական հարաբերություններում կարիք կար դրսևորելու առավել մեծ ճկունություն և նրբանկատություն՝ ռումինական կողմին չօտարելու և ռուսական կողմի կոշտ հակազդեցությանը չհանդիպելու համար: Ուստի Ռումինիայի ներկայացուցիչների հետ հանդիպումների ժամանակ հայկական կողմը կարևորում է ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում Հայաստանի և Ռումինիայի միջև համագործակցությունը և կարծիք հայտնում, որ Կովկասի անվտանգությունը չի կարող բացառապես կապվել երկու ռազմաքաղաքական դաշինքներից (ՀԱՊԿ կամ ՆԱՏՕ) որևէ մեկի հետ⁵⁴: Այսպիսով, եվրաստլանտյան ռազմաքաղաքական ուղղությունը դժվար է համարել հայկական ու ռումինական շահերը միավորող կամուրջ, եթե չասենք՝ ճիշտ հակառակը: Համենայն դեպս դա չի էլ նշանակում, որ համագործակցության կամուրջներն այրված էին, չնայած պաշտոնական Երևանը պետք է նրբանկատ և ճկուն գտնվեր:

Հայ-ռումինական համագործակցության ծավալման համար մեկ այլ, առավել «անվտանգ» հարթակ էին ԵՄ-ի հետ համագործակցային շրջանակները: Այդ ուղղությամբ Ռումինիայի կուտակած փորձը Հայաստանի համար հետաքրքրական էր ոչ միայն եվրոպական կառույցներին ինտեգրվելու և եվրոպականամալու առումով, այլ նաև երկրի արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը հնարավորինս «անցավագին» ձևավորելու և առավելագույնս արդյունավետ գործարկելու տեսանկյունից: Առավել ևս, որ Ռումինիայի և Հայաստանի համար հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում ձևավորված իրադրությունն ու պաշտոնական Մոսկվայի վերաբերմունքը որոշակիորեն համադրելի էին: Այս իրավիճակում պաշտոնական Երևանը կարող էր հետևություններ անել ռումինական փորձից: Այդ նկատառումով էլ Ռումինիայի ԱԳ նախարար Ա. Սևերինի և փոխնախարար Լ. Կոմենեսկուի հետ ՀՀ ԱԳ առաջին փոխնախարար Վ. Օսկանյանի 1997 թ. ունեցած քաղաքական խորհրդրդատվությունների ժամանակ ռումինական կողմը պատրաստակամություն է հայտնում աջակցություն ցուցաբերել ՀՀ եվրաինտեգրման գործընթացին և ՀՀ ԱԳ-ին տրամադրել Ռումինիայի անդամակցության հետ կապված փաստաթղթերի և ԵՄ հարցաթերթիկների պատասխանների փաթեթները⁵⁵:

Այսպիսով, հայ-ռումինական հարաբերությունները կրում էին զուսպ և կաշկանդված բնույթ, ինչը պայմանավորված էր երկու կողմերի արտաքին քաղաքական նախափրություններով ու կողմնորոշումներով: Երկու կողմերն էլ ունեին արտաքին քաղաքական համադրելի խնդիրներ, որոնք կարող էին կողմերին մերձեցնող կամուրջներ դառնալ: Սակայն կողմերի զգուշավորությունն ու զսպվածությունը խանգարող հանգամանքի դեր էին կատարում, և երկխոսությունն ստացվում էր դժվարությամբ: Ղարաբաղյան հիմնահարցը, շրջափակումն ու ռուսական գործոնը և դեպի ՆԱՏՕ ձգտումը, հունգարական խնդիրն ու տարածաշրջանում ռումինական ածխաջրածնային շահերը պաշտոնական Երևանին ու Բուխարեստին դնում

⁵⁴ Տե՛ս նույն տեղը, գ. 52, թ. 149:

⁵⁵ Տե՛ս նույն տեղը, գ. 216, թ. 22:

են եթե ոչ հակադիր, ապա գոնե միմյանցից բավականին հեռու բևեռների վրա, որոնց միջև ընկած ճանապարհը հաղթահարելու համար շատ ժամանակ ու մեծ ջանքեր էին պահանջվում:

ГРИГОР ГРИГОРЯН – Фактор внешнеполитических приоритетов в отношениях между Арменией и Румынией в 1991–2001 гг. – В отношениях между Арменией и Румынией важную роль играют их внешнеполитические приоритеты. В силу этого страны нередко демонстрируют разные подходы к международным событиям. Разница подходов и приоритетов вынуждает обе страны к осторожности в своих двусторонних отношениях, которые носят ограниченный характер, несмотря на очевидный потенциал для развития. Уровень этих отношений в течение двух десятилетий остаётся низким, они отмечены многими неиспользованными возможностями.

GRIGOR GRIGORYAN – The Factor of Foreign Policy Priorities in the Relations between Armenia and Romania in 1991-2001. – After the establishment of diplomatic relations Armenia and Romania started to build interstate relations. For this purpose it is very important to become aware of each other's foreign policy priorities to develop the relations in the appropriate way. For Armenia and Romania the factor of the foreign policy priorities has a significant influence as the sides have adopted quite different approaches towards the developments in the nearby and neighbouring regions. The difference of approaches and priorities made the officials of Armenia and Romania be careful in their steps towards each other connecting and weighting them with the impulses from outside of the bilateral relations. This made the relations quite constraint though they had potential for development. The level of the relations between Armenia and Romania still remains low and full of unimplemented potential.